

ԲԱՅՐ ՈՐՊԵՍ ԽՈՍՔԻ ՄԱՍ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆԻ
ԴԵՐԲԱՅՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

Մ. Ե. ՉՈԱՏՐՅԱՆ

1. Դայը որպես խոսքի մաս.— Խոսքի մասերի մեջ իր ձևերի բաղմազանությունամբ, քերականական կարգերի հարստությամբ ու ճոխությամբ և խոսքի մեջ խաղացած դերով հատուկ տեղ ունի բայը: Այս խոսքի մասային կարգի մեջ մտնող բառերի իմաստային հիմքը գործողության, ընթացքի գաղափարն է: Իմաստային այդ կողմը դրսևորվում է հայերենի բայի ձևաբանական և շարահյուսական ինքնատիպ առանձնահատկություններով:

Հայերենում բայի ամենացայտուն դրսևորված ձևաբանական առանձնահատկությունը մյուս խոսքի մասերի համեմատությամբ այն է, որ նա, որպես կանոն, բաղադրյալ է և սլարգ կամ միաձևությ լինել չի կարող, ինչպես՝ գր/ել—գր/ում—գր/ել/իս—գր/ած—գր/ող—գր/եց/ի—գր/եմ—գր/իր, կարդ/ալ—կարդ/-ում—կարդ/ալ/իս—կարդ/ալ/ու—կարդ/աց/ել, կարդ/աց/ած—կարդ/աց/ող—կարդ/աց/ի—կարդ/ամ—կարդ/ա և այլն: Այս տեսակետից բացառություն են կազմում միայն հրամայականի մի քանի ձևեր՝ ա՛ռ, բե՛ր, ե՛լ, զսի՛րե, տե՛ս, թո՛ղ:

Քննարկվող հարցի վրա հայ լեզվաբանական գրականության մեջ առանձնահատուկ ուշադրություն է դարձրել պրոֆ. Ա. Աբրահամյանը, որը ճիշտ արձանագրելով հայերենի այսպիսի դրությունը, գրում է. «Հայերենում բայական բառույթները բաղադրված, ո՛չ միաձևույթ ձևեր են, ուստի այստեղ բայական բառույթը իր կազմությամբ միշտ ավելին է, քան նրա արմատը...

Ժամանակակից գրական հայերենում պատկերն այսպես է ոչ միայն բայական բառույթը նշելու համար վերցվող անորոշ դերբայում, այլև բայական բոլոր ձևերում (դերբայական և դիմավոր): Միայն մի քանի բացառություններ կարելի է ցույց տալ հրամայական եղանակի եղակի թվում, ինչպես՝ ա՛ռ, բե՛ր, հա՛ն (նաև հանի՛ր), ե՛լ (նաև ելի՛ր), տե՛ս, թո՛ղ, դի՛ր, տո՛ւր (վերջին երկուսը արմատի տարբերակներով), որոնք համընկնում են արմատին, սակայն սուր շեշտ են կրում»¹:

Բայի բաղադրականությունը ոչ միայն հայերենի, այլև շատ այլ լեզուների (օրինակ՝ ռուսերեն, գերմաներեն) ամենացայտուն դրսևորված կառուցվածքային առանձնահատկությունն է:

Հայերենի բայի բաղադրականությունից բխում է նրա մի այլ առանձնահատկություն: Դա այն է, որ ի տարբերություն մյուս խոսքի մասերի, որոնք, որպես կանոն, ձևային միություն չունեն և որոշվում են գլխավորապես իմաստային հիմունքով, բայերը ունեն ոչ միայն իմաստային, այլև ձևային ընդհանրություն: Ինչպես հայտնի է, որպես բայի ելակետային ձև ընդունվում է անորոշ դերբայը: Եվ դա պիտականորեն ու տեսականորեն միանգամայն ար-

¹ Ա. Աբրահամյան, Բայը ժամանակակից հայերենում, Երևան, 1962, էջ 43:

դարացվում է, որովհետև հենց անորոշ դերբայն է, որ անվանում է գործողութ-
թյունը, նա գործողութայն անուն է, ինչպես որ գոյականի ուղղական ձևը
սուարկայի անուն է: Հայերենի բոլոր անորոշ դերբայները վերջավորվելով ել
կամ ալ ձևով, ինչպես՝ գրել, վագել, ծիծաղել, կատարել, բերել, մտածել, գգալ,
մնալ, աղալ, սգալ, ողբալ, կարդալ և այլն, որպես գործողութայն անուններ ոչ
միայն իմաստային, այլև ձևային միություն են կազմում: Ձևային այս միու-
թյունն առկա է ոչ միայն անորոշում, այլև դերբայական ու եղանակային մյուս
բոլոր ձևերում, ինչպես՝ գրում-վագում-ծիծաղում-կարդում-զգում-մնում, գրե-
լու-վագելու-ծիծաղելու-կարդալու-զգալու-մնալու, գրած-վազած-ծիծաղած-
կարդացած-զգացած-մնացած, գրող-վագող-ծիծաղող-կարդացող-զգացող-
մնացող, գրեցի-վագեցի-ծիծաղեցի-կարդացի-զգացի-մնացի, գրեմ-վագեմ-
ծիծաղեմ-կարդամ-զգամ-մնամ, գրիր-վագիր-ծիծաղիր, կարդա-զգա-մնա և
այլն:

Բայր մյուս բոլոր խոսքի մասերին հակադրվում է նաև իր քերականական
կարգերի բնութթով և առանձնահատկություններով: Նախ՝ բային հատուկ է
սեռի քերականական կարգը, որը դրսևորվում է վ՛ և ցն մասնիկներն ունեցող և
այդ մասնիկները շունեցող համապատասխան բայերի հակադրությամբ, ինչ-
պես՝ գրել-գրվել, սիրել-սիրվել, հարգել-հարգվել, կատարել-կատարվել, ջար-
դել-ջարդվել, կտրել-կտրվել, կարդալ-կարդացվել, բարձրանալ-բարձրացնել-
բարձրացվել, մեծանալ-մեծացնել-մեծացվել, ստրկանալ-ստրկացնել-ստրկաց-
վել, շորանալ-շարացնել-շորացվել և այլն: Բայի այս սեռային ձևերից ներգոր-
ծականները և կրավորականները, որպես անմիջական և ուղղակի հակադրու-
թյուններ, պայմանավորում են շարահյուսական հատուկ կառուցվածքներ, այն
է՝ ներգործականները պահանջելով ուղիղ խնդիր՝ կազմում են ներգործական
(ակտիվ) կառուցվածքի նախադասություններ, ինչպես՝ Դիրեկտորը պարգե-
վատրեց ուսանողին, Հայրը սիրում է որդուն, իսկ կրավորականները պահան-
ջելով ներգործող խնդիր՝ կազմում են կրավորական (պասիվ) կառուցվածքի
նախադասություններ, ինչպես՝ Ուսանողը պարգևատրվեց դիրեկտորից, Որդին
սիրվում է հորից: Ինչպես անմիջաբար նկատվում է, բայասեռի կարգը սոսկ
ձևաբանական կարգ չէ, նա սերտ կերպով կապված է նախադասության շա-
րահյուսության հետ:

Այնուհետև. բային ներհատուկ է և նրա էությունն է կազմում խոնարհու-
մը: Այս քերականական կարգը հատուկ է բային և միայն ու միայն բային:
Խոսքի մեջ ձևափոխությունների ենթարկվելով, խոնարհվելով և այսպիսով
կազմելով դիմավոր կամ եղանակային ձևեր, ինչպես՝ գրում եմ, գրում ես,
գրում է, գրել եմ, գրելու եմ, գրեցի, գրեմ, կգրեմ, գրիր և այլն, բայը հանդես
է բերում եղանակի, ժամանակի, դեմքի, թվի քերականական կարգերը, որոնք
ներհատուկ են բային և ունեն իրենց բնորոշիչ առանձնահատկությունները:

Որպես բայի ձևաբանական առանձնահատկություն պետք է նշել նաև այն,
որ նրան հատուկ է ժխտման քերականական կարգը, որն արտահայտվում է չ
մասնիկի միջոցով, օրինակ՝ գրել-չգրել, գրած-չգրած, գրող-չգրող, գրեցի-չգրե-
ցի, գրեմ-չգրեմ, կգրեմ-չեմ գրի, իսկ հրամայականի դեպքում՝ մի մասնիկի
միջոցով, օրինակ՝ կարդա՛-մի՛ կարդա, մնա՛-մի՛ մնա, գրի՛ր-մի՛ գրիր, վա-
զի՛ր-մի՛ վագիր, կարդացե՛ք-մի՛ կարդացեք, գրեցե՛ք-մի՛ գրեք կամ մի՛ գրե-
ցեք և այլն:

Բայց խոսքի մեջ հանդես է գալիս երկու ձևով՝ անդեմ կամ դերբայական և դիմավոր կամ եղանակային: Դերբայական ձևերին հատուկ չեն եղանակի, ժամանակի, դեմքի և թվի քերականական կարգերը. բայի դիմավոր ձևերի հետ դրանց միավորում է բայական իմաստը, այսինքն՝ գործողության, ընթացքի իմաստը և բայասեռի ու դրանից բխող խնդրառության քերականական կարգերի ընդհանրությունը:

Այս բանը առիթ է տվել տարբերակելու երկու տիպի կարգեր՝ բայական խոսքի մասային և բայական ստորոգելիական կարգեր: Դոց. Հ. Բարսեղյանը քննարկվող հարցի մասին գրում է. «Ժամանակակից հայերենի՝ բայի դերբայական կամ անդեմ ձևերն ունեն միայն սեռի և մասամբ էլ կերպի քերականական կատեգորիաներ. իսկ եղանակային ձևերը՝ սեռի, կերպի, ժամանակի, եղանակի, դեմքի և թվի քերականական կատեգորիաներ»²: Եվ որովհետև սեռի և կերպի (նկատի ունի սաստկական, բազմապատկական «կերպը»՝ ջարդել-ջարդոտել, կտրել-կտրատել, փշրել-փշրտել, նստել-նստոտել և այլն) քերականական կարգերն են միայն, որ հատուկ են ամբողջ բային, այսինքն նրա և՛ անդեմ, և՛ դիմավոր ձևերին, «ուստի և սեռն ու կերպը կարելի է համարել բայական խոսքի-մասային քերականական կատեգորիաներ»: Նույն գուգահեռությանմբ՝ քանի որ բայը «գործողության կերպ» (նկատի ունի դերբայներով դրսևորվող գործողության ընթացքի վիճակը՝ գրում—կատարվող գործողություն կամ կատարվող կերպի գործողություն, գրելու—կատարելի կերպի գործողություն, գրել (եմ)—կատարված կերպի գործողություն—Մ. Ա.) եղանակ, ժամանակ, դեմք և թիվ է արտահայտում միայն ստորոգյալի պաշտոնում. եղանակային ձևերով, «ուստի և այդ կատեգորիաները կարելի է համարել բայական ստորոգելիական կատեգորիաներ»³:

Այս կապակցությամբ նշենք, որ պրոֆ. Գ. Սևակը բայի, որպես խոսքի մասի հիմնական հատկանիշներն է համարում բայիմաստը կամ գործողության իմաստը, սեռը և խնդրառությունը⁴. Հենց այդ հատկանիշներով է, որ և՛ անդեմ, և՛ դիմավոր ձևերը միավորվում են մեկ քերականական կարգի տակ:

Ձնայած բայական կարգերի այսպիսի առանձնացմանը (բայական խոսքի մասային կարգեր և բայական ստորոգելիական կարգեր), պետք է նշել, որ բայ խոսքի մասի բուն և իսկական էությունը հանդես է գալիս նրա դիմավոր. եղանակային ձևերի մեջ, որոնցով էլ հենց նա առանձնանում է մյուս խոսքի մասերից և հակադրվելով նրանց՝ խոսքի մասերի համակարգում իր ուրույն ու առանձնահատուկ տեղն է գրավում: Իսկ ինչ վերաբերում է բայի անդեմ ձևերին՝ դերբայներին, ապա նրանց մասին պետք է ասել հետևյալը: Դերբայների մի մասը, այն է՝ անկատար (ում), ապառնի (ու), վաղակատար և ժխտման դերբայները սոսկ հանդես գալով որպես եղանակային ձևերի բաղադրիչ, ինչպես՝ գրում եմ-գրելու եմ-դրել եմ-չեմ գրի\գրում էի-գրելու էի-գրել էի-չէի դրի, փաստորեն ինքնուրույն ու առանձին բառ կոչվելու բավարար կովաններ չունեն: Դերբայների մյուս մասը, այն է՝ անորոշ, անկատար II (իս), ասլառնի II (իք), հարակատար և ենթակայական դերբայները, որոնք «անկախ»,

² Հ. Բարսեղյան, Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն, Երևան, 1953, էջ 117:

³ Նույն տեղում, էջ 118:

⁴ Տե՛ս Գ. Սևակ, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Երևան, 1955, էջ 286—287:

«առանձին» բառեր են և ինքնուրույն շարահյուսական կիրառություն ունեն՝ մնալով բայ խոսքի մասի համակարգում, նրա անկապտելի մասը կազմելով՝ և՛ իմաստով, և՛ շարահյուսական կիրառություններով շփման եզրեր են հանդես բերում գոյականի (անորոշ, ենթակայական, ապառնի II), ածականի (հայակատար, ենթակայական, ապառնի II) և մակբայի (անկատար II) հետ։ Այլ խոսքով ասած՝ վերոհիշյալ ղերբայների մեջ բայական, այսինքն գործողության, ընթացքի նշանակությանը զուգահեռ ղրսեորվում են նաև այլ և այլ խոսքի մասային նշանակություններ։ Այս հարցը հետո քննվում է ավելի համաձայնորեն։

Բայը յուրահատուկ տեղ է գրավում խոսքի մասերի համակարգում նաև իր շարահյուսական առանձնահատկություններով։

Բայը ժամանակակից հայերենում միակ խոսքի մասն է, որ կարող է հանդես գալ և հանդես է գալիս ստորոգյալի պաշտոնով։ Բայի եղանակային ձևերը գործողության հետ միաժամանակ արտահայտելով եղանակի, ժամանակի, դեմքի և թվի քերականական զաղափարները, նախադասության մեջ համարյա միշտ հանդես են գալիս ստորոգյալի պաշտոնով, ինչպես՝ իմ անվերջ ճամփի տանջանքից հոգնած՝ ես ննջել էի ոսկեղեն արտում, Ու ճշույց սիրտս վայելքից անկարծ.— Թվաց որ մեկը կանչում է տրտում... Եվ ես արթնացա խնդության ցավից.— Գիշերվա հովն էր լալիս դաշտերում, Մութ հեռատանն էր դժկամ նայում ինձ, Մենակությունն էր քարի պես լռում... (Վ. Տերյան)։ Դիմավոր ձևերի ստորոգելիական գործածությունը այդ ձևերի հենց բուն էության ղրսեորումն է, սովորական է ու զանգվածային, ուստի և ավելի օրինակներ բերելու կարիք չի զգացվում։

Ասացինք, որ հայերենում ստորոգյալի պաշտոնով հանդես եկող միակ խոսքի մասը բայն է։ Ծիշտ է, ստորոգյալի ձևավորմանը կարող են մասնակցել նաև այլ խոսքի մասեր, ինչպես՝ նա գլուղացի է, իսկ դու փառափառի ես. Գայլը գազան է. Ձյունն սպիտակ է. Վարդը հոտավետ է. Ծանապարհը փռչում է և այլն, բայց այսպիսի դեպքերում էլ բաղադրյալ ստորոգյալի կազմում կա նաև բայական մաս՝ հանգույց, որն արտահայտում է եղանակի, ժամանակի, դեմքի ու թվի և, հետևաբար, ստորոգման շարահյուսական կարգը, որը ոչ միայն ստորոգյալի, այլև նախադասության էական հատկանիշն է ընդհանրապես։

Որովհետև հայերենում ստորոգում կատարող միակ խոսքի մասը բայն է, դրանից հետևում է, որ բայը նախադասության կազմում կատարում է բացառիկ դեր։

Հենց հայերենի բայի՝ նախադասության մեջ ունեցած այդ բացառիկ դերը նկատի ունեն պրոֆ. Մ. Աբեղյանը, երբ գրում էր. «Բայը բուն իռսֆն է (նախադասությունը—Մ. Ա.) կամ իռսֆի էական մասը. իսկ լրացումները՝ ենթակա, խնդիրներ և կողմնակի խնդիրներ, բայի նկատմամբ իռսֆի երկրորդական մասերն են»⁵։ Կամ «Առանց բայի խոսք (նախադասություն—Մ. Ա.) չկա, որովհետև մյուս տեսակի բառերը ստորոգում չեն ցույց տալիս, այլ նշանակում են կամ մի առարկա (տուն, ծառ), կամ մի հատկանիշ (բարձր, լավ)։

Ամեն բայ, ընդհակառակն, մենակ կազմում է մի խոսք, որովհետև ցույց է տալիս թե ստորոգում և թե խոսքի համար անհրաժեշտ՝ ենթակայի և ստորոգյալի (առարկայի և հատկանիշի) զաղափարները։

⁵ Մ. Աբեղյան, Աշխարհաբարի քերականություն, Վաղարշապատ, 1906, էջ 46։

խոսքն, ուրեմն, մտածության արտահայտությունն է բայով: Իսկ բայ ասվում են այն բառերը, որոնք մենակ խոսք են կազմում՝ ցույց տալով թե խոսքի ձևը (ստորագումը) և թե խոսքի նյութը՝ ենթակալ և ստորոգյալը, առաջինն արտահայտված բայի գեմքով, իսկ երկրորդը՝ բախմաստով»⁶:

Եթե մի կողմ թողնենք պրոֆ. Մ. Աբելյանի այս դատողությունների որոշ վիճելի կետերը և շեշտը դնենք հարցի էության վրա, պետք է նշենք, որ մեծ լեզվաբանը իրեն հատուկ գիտական խորությամբ է բացահայտել այն դերը, որ կատարում է բայը (իսկ բայ ասելով նա միշտ նկատի ունի գիմավոր, Լղանակային ձևերը) հայերենի շարահյուսական համակարգում: Չէ՞ որ վերջիվերջո անժխտելի է այն գրույթը, որ հայերենում ամեն մի գիմավոր բայ պարզագույն մի նախադասություն է կազմում⁷, օրինակ՝ Գնացի. Տեսա. Գնացիր. Տեսաք. Գնաց. Տեսավ. Գնում է. Տեսնում է և այլն: Դիմավոր բայերով կազմված նախադասությունների համեմատությամբ հայերենում չափազանց քիչ դեր ու կշիռ ունեն այսպես կոչված անդեմ և անվանողական նախադասությունները (օրինակ՝ Բարձրացնե՛լ աշխարհանքի արտադրողականությունը. Սանձաղերծե՛լ պատերազմի հրձիգներին. Կայարան. Ջորքեր, զորքեր և նմանները): Դրանք մեր լեզվի շարահյուսական համակարգում այնքան ոչ-էական, երկրորդական դեր են կատարում, որ առանձին ուսումնասիրողներ (օրինակ՝ հենց ինքը՝ պրոֆ. Մ. Աբելյանը) դրանց կողքով լռելյայն են անցնում՝ անդեմ և անվանողական նախադասությունները դուրս թողնելով իրենց հետազոտության ոլորտներից:

Բայի շարահյուսական կիրառությունները քննելիս, իհարկե, չի կարելի աչքաթող անել գերբայները: Հայերենի գերբայական ձևերից մի քանիսը հենց ինքնին (և ոչ թե խոսքի մասային փոխանցումներով) հանդես են գալիս գոյականին, ածականին ու մակբային հատուկ շարահյուսական ֆունկցիաներով՝ նախադասության մեջ դորժածվելով որպես ենթակա ու խնդիր (անորոշ, ենթակայական, ապառնի II), որոշիչ (հարակատար, ենթակայական, ապառնի II) և ժամանակի պարագա (անկատար II): Բայց այս փաստը նշանակում է միայն մի բան, այն, որ այս դերբայների մեջ՝ դորժողության, ընթացքի նշանակությունը «մաքուր», «անխառն» ձևով չի դրսևորվում և միահյուսվում ու միաձուլվում է այլ և այլ խոսքի մասային նշանակությունների հետ:

Բայի ցայտուն դրսևորված շարահյուսական մյուս առանձնահատկությունը խնդրառությունն է, որը դրսևորվում է գոյականների և առարկայական իմաստ արտահայտող այլ բառերի հոլովական ձևերի՝ բայերից ունեցած կախմամբ: Խնդրառությունը համընդհանուր բայական-շարահյուսական կարգ է և հավասարապես հատուկ է բայի և՛ անդեմ, և՛ դիմավոր ձևերին: Բայերը այս կամ այն հոլովով (կամ հոլովով ու կապով) արտահայտված խնդիրներ ու պարագաներ ինչ անում իրենց իմաստի կամ սևռի թելադրությամբ ու պահանջով, ըստ որում՝ բայիմաստի պահանջով դրված խնդիրները և պարագաները նույնությամբ պահպանվում են նաև նույն բայից ածանցված կամ նույն արմատն ունեցող գոյականների և ածականների հետ, իսկ սևռի պահանջով դրված խնդիրները՝ կրող (ուղիղ) և ներդորժող խնդիրները, հատկապես առաջինը,

⁶ Մ. Աբելյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 362:

⁷ Կան, իհարկե, առանձին բացառություններ (այսպես կոչված «վերացական» բայերը)՝ որոնք այստեղ հաշվի չենք առնում:

հատուկ են միայն բայերին (առաջինը՝ ներգործական, իսկ երկրորդը՝ կրավորական սեռի բայերին):

Ստորև բերվում են մի քանի օրինակներ նույնարմատ բայերի, գոյականների, ածականների (մակբայների) խնդրառության ընդհանրությունն ու նույնությունը ցույց տալու համար: Հեռանալ մի բանից, հեռացում մի բանից, հեռու մի բանից. Մոտենալ մի բանի, մոտեցում մի բանի, մոտ մի բանի. Հպարտանալ մի բանով, հպարտություն մի բանով, հպարտ մի բանով. Հանդիպել մեկին//մեկի հետ, հանդիպում մեկին//մեկի հետ. Կռվել մեկի դեմ//մեկի հետ, կռիվ մեկի դեմ//մեկի հետ. Խոսել մի բանի մասին, խոսք մի բանի մասին. Ներգործել մեկի, մի բանի վրա, ներգործություն մեկի, մի բանի վրա: Օրինակները կարելի է ավելացնել, բայց բավարարվենք այսքանով: Տարբեր խոսքի մասերի խնդրառության այս ընդհանրությունն ու նույնությունը բացատրվում է նրանց իմաստային ընդհանրությամբ. չէ՞ որ նրանք բոլորն էլ նույն արմատն ունեն, հետևաբար և նյութական-իմաստային կողմով իրարից հեռու չեն:

Մական կա խնդրառության մի տիպ, որ հատուկ է միայն բայերին և այն էլ ներգործական սեռի բայերին: Վերջիններս կապակցվելով ուղիղ խնդրի հետ՝ պայմանավորում են միայն իրենց հատուկ շարահյուսական կառուցվածք, ինչպես՝ սիրել հայրենիք, երեխային, գիրք գրել. նամակ կարդալ, մրգերը հավաքել, փայտ կտրել, տուն մաքրել, աշխատանքը վերջացնել, դռնը բացել, տունն այրել, կավիճը փշրել և այլն: Եվ հենց իրենց այսպիսի խնդրառությամբ է, որ բայերը տարբերվում են մյուս կարգի բոլոր բառերից: Պետք է նշել, որ այս տեսակետից ուղիղ խնդրի հետ չի կարող համեմատվել ներգործող խնդիրը, որը նույն ձևով կարող է հանդես գալ նաև բայանունների հետ, օրինակ՝ սպասարկվել մի կազմակերպության կողմից//սպասարկում մի կազմակերպության կողմից, արհամարհվել բոլորի կողմից//արհամարհանք բոլորի կողմից, բարձրացվել կառավարության կողմից (Այս հարցը բարձրացվեց կառավարության կողմից)//բարձրացում կառավարության կողմից (Այս հարցի բարձրացումը կառավարության կողմից հետապնդում է հետևյալ նպատակը) և այլն: Ճիշտ է, երկրորդ կապակցություններն ավելի քիչ են հանդիպում, քան առաջինները, բայց համենայն դեպս հանդիպում են և լեզվում գոյություն ունեն:

Ամփոփելով բոլոր ասվածները՝ կարելի է հանգել հետևյալ ընդհանուր եզրակացությանը:

Բայը իմ իմաստային, ձևաբանական ու շարահյուսական առանձնահատկություններով հատուկ տեղ է գրավում հայերենի խոսքի մասերի համակարգում:

Իմաստաբանորեն՝ բայը բնորոշվում է գործողության, ընթացքի գաղափարի արտահայտմամբ. ձևաբանորեն՝ որպես խոսքի մաս ունեցած իր հատուկ ձևով, բաղադրյալ բազմաձևությամբ կազմությամբ, խոնարհմամբ (որի դեպքում դրսևորվում են եղանակի, ժամանակի, դեմքի ու թվի քերականական կարգերը), այլև բայասեռով. շարահյուսորեն՝ ստորոգման քերականական կարգի դրսևորմամբ, որի շնորհիվ էլ նա հայերենում ստորոգյալի պաշտոնով հանդես եկող միակ խոսքի մասն է, խնդրառությամբ՝ ընդհանրապես և միայն իրեն հատուկ ուղիղ խնդրի ուղղական-տրական (այլ տերմինաբանությամբ՝

հայցական) խնդրառություններ՝ մասնավորապես (վերջինս հատուկ է միայն ներգործական սեռի բայերին):

2. Ժամանակակից հայերենի դերբայների քննադատական հատկանիշները.— Կարելի՞ է արդյոք դերբայական բոլոր ձևերը՝ կարդալ, կարդում, կարդալիս, կարդալու, կարդացել, կարդացած, կարդացող, կարդա, կարդալիք համարել նույն բառի քերականական ձևեր կամ բառաձևեր: Չէ՞ որ դրանցից մի մասը իմաստով բավականին հեռու է մյուսներից. մյուս կողմից՝ անորոշը, անկատար II-ը, հարակատարը, ենթակայականը և ապառնի II-ը բառային ինքնություն ու անկախություն ունեն. ճիշտ ենք վարվում մենք, այս դերբայները ևս, մյուսների նման, դիտելով որպես բառի քերականական ձևեր: Անժխտելի է, իհարկե, որ բառային ինքնություն կիրառություն ունեցող դերբայները մյուսներից տարբերվում են ոչ միայն իրենց հարաբերական անկախությամբ, այլև լեզվի համակարգում խաղացած դերով: Բայց, համենայն դեպս, դրանք ևս մյուսների նման քերականական ձևեր են, բառաձևեր և ոչ թե անկախու ինքնություն բառային միավորներ: Դրանում համոզվելու համար պետք է նկատի ունենալ հետևյալը:

Ժամանակակից հայերենի բոլոր դերբայները, անկախ նրանց իմաստից և լեզվի համակարգում խաղացած դերից ու շարահյուսական կիրառություններից, իրար հետ կապված, իրարով պայմանավորված, համագոյակից ձևեր են, և դրանցից մեկի գոյությունը կանխադրում է նաև մյուսների գոյությունը: Եթե լեզվում ունենք որևէ դերբայական ձև, օրինակ՝ մշակել, ապա հաստատվարող ենք ասել, որ ունենք (կամ կարող ենք կազմել) մյուս բոլոր դերբայական ձևերը, ինչպես՝ մշակում, մշակելիս, մշակելու, մշակել (եմ), մշակած, մշակող, մշակի, մշակելիք: Ամեն մի անորոշ դերբայ ունի իր համապատասխան անկատար, ապառնի, հարակատար և մյուս բոլոր դերբայները. ամեն մի հարակատար դերբայ ունի իր համապատասխան անորոշ, անկատար, ենթակայական ու մյուս բոլոր դերբայները և այսպես շարունակ: Ահա ձևերի այսպիսի հետևողական ու բացառություններ շճանաչող հարաբերակցությունը ոչ մի կասկած չի թողնում այն մասին, որ բոլոր դերբայները քերականական ձևեր են և ոչ թե առանձին, անկախ բառեր: Հենց այն բանը, որ ասենք ած և ող մասնիկները կարող են հարակատար և ենթակայական դերբայներ կազմել համարյա բոլոր բայերից, նշանակում է, որ դրանք ձևակազմական և ոչ թե բառակազմական մասնիկներ են:

Հայերենի բոլոր դերբայները միավորվում ու համախմբվում են մի բառի տակ որպես քերականական ձևեր, որովհետև նրանց բոլորին, դիմավոր ձևերի նման, հատուկ է գործողության, ընթացքի զաղափարը, որն իր նյութական քերականական արտահայտությունն է ստանում բայասեռի և խնդրառության կարգերում: Այսպես, հաջորդաբար էլ հայերենի բոլոր դերբայները, որպես բայի անդամ ձևեր, ի հակադրություն դիմավոր ձևերի, կարող են համախմբվել մեկ քերականական կարգի տակ:

Սակայն բայի անդամ ձևերը՝ մի կողմից և դիմավոր ձևերը՝ մյուս կողմից տարաբնույթ առանձնահատկություններ են երևան հանում, որն անպայման պետք է հաշվի առնել հայերենի դերբայական ձևերն ուսումնասիրելիս ու բնութագրելիս: Այս հարցը հանդում է հետևյալին: Բայի բոլոր դիմավոր ձևերը համասեռ ֆեռականական առանձնահատկություններ են երևան հանում. նրանք յիարից տարբերվում են իրենց ձևաբանական առանձնահատկություններով

միայն, այն է՝ եղանակով, ժամանակով, դեմքով ու թվով, բայց ոչ երբեք կիրառությամբ ու լեզվի համակարգում խաղացած իրենց դերով: Եթե հաշվի չառնենք առանձին բացառությունները, կարող ենք ասել, որ բայի դիմավոր ձևերը խոսքի մեջ նույն ֆունկցիան ունեն, այսինքն՝ հանդես են գալիս ստորագյալի շարահյուսական պաշտոնով: Լեզվի մեջ ինչ կիրառություն որ ունի, ասենք, գրում եմ ձևը, նույն կիրառությունը կունենա գրել եմ ձևը, այլև գրելու եմ ձևը, և այդ ձևերի միջև, բացի կերպային-ժամանակային տարբերություններից, այլ տարբերություններ ցույց տալ հնարավոր չէ: Այսպես էլ ինչ կիրառություն որ ունի գրում էի ձևը, նույն կիրառությունը կունենա գրել էի ձևը, այլև գրելու էի ձևը, և այս ձևերի միջև ևս, բացի կերպային-ժամանակային տարբերություններից, այլ տարբերություններ ցույց տալ հնարավոր չէ: Ուրիշ դեպքերում դիմավոր ձևերը իրարից կարող են տարբերվել եղանակով, դեմքով, թվով, այսինքն՝ նորից ձևաբանորեն, բայց ոչ երբեք լեզվի կառուցվածքում իրենց խաղացած դերով, շարահյուսական կիրառություններով:

Եթե հարցին մոտենում ենք այս տեսակետից, ապա անմիջաբար պարզ է դառնում, որ հայերենի դերբայական ձևերը տարասեռ, տարաբնույթ ֆեռականական առանձնահատկություններ են երևան հանում:

Հին քերականության թերությունն այս հարցում այն էր, որ բոլոր դերբայները քննվում էին նույն մակարդակի վրա՝ բավարար ուշադրություն չըդարձնելով դերբայների ներքին խմբավորման և նրանց տարբեր խմբերի դրսևորած առանձնահատկությունների ու յուրահատկությունների վրա: Դերբայների ուսումնասիրության ժամանակ այս հարցերի վրա է հենց իր ուշադրությունը բևեռում նորագույն լեզվաբանությունը:

Հստ դերբայական ձևերի տարբեր կիրառությունների և լեզվի կառուցվածքում դրսևորած տարբեր ֆունկցիաների՝ ժամանակակից հայերենի դերբայները բաժանվում են երկու խմբի⁸:

ա) Ինքնուրույն շարահյուսական կիրառությունից զուրկ և, հետևաբար, բառային անկախություն չունեցող դերբայներ, որոնք են՝ անկատար (կարդում), ապառնի (կարդալու), վաղակատար (կարդացել), ժխտման (կարդա): Դրանք է. Աղայանի հորջորջած կերպային դերբայներն են:

բ) Ինքնուրույն շարահյուսական կիրառություն ունեցող և, հետևաբար, բառային անկախություն ունեցող դերբայներ, որոնք են՝ անորոշ (կարդալ), անկատար II (կարդալիս), հարակատար (կարդացած), ենթակայական (կարդացող), ապառնի II (կարդալիք): Դրանք է. Աղայանի հորջորջած վիճակային դերբայներն են:

Առաջին խմբի դերբայները մենք կոչում ենք կախյալ դերբայներ, իսկ երկրորդ խմբինը՝ անկախ դերբայներ:

Կախյալ դերբայներից անկատարը (կարդում), վաղակատարը (կարդացել) և ապառնին (կարդալու) իրենց իմաստով և լեզվի ձևաբանական կառուցվածքում խաղացած դերով համազոր են ու համահնչյուն՝ կազմելով եռանդամ հակադրություն: Այս դերբայները իրարից տարբերվում են սոսկ իրենց արտահայտած կերպային-ժամանակային իմաստով, այն է՝ անկատարը արտահայտում է կատարվող, ընթացքի մեջ գտնվող գործողություն, վաղակատարը՝

⁸ Այս և հետագա շարադրանքը հմտ. է. Աղայանի «Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը» (Երևան, 1967) աշխատության հետ (էջ 344—348):

կատարված, ավարտված, ընթացքից դուրս եկած գործողություն, իսկ ապառ-
նին՝ կատարելի, սպասելի գործողություն: Իմաստային այսպիսի ուղղաձիգ
հակադրությունը պայմանավորում է այս բերրայների՝ լեզվի ձևաբանական
կառուցվածքում կատարած համահնչյուն ու համազոր գերը, որն արտահայտ-
վում է նրանում, որ դրանցից յուրաքանչյուրը օժանդակ բայի ներկայի և անց-
յալի ձևերի հետ բաղադրում է սահմանական եղանակի երկուական ժամանակ՝
ժամանակակից հայերենի համար այնքան բնորոշ՝ կարդում եմ-կարդում էի,
կարդացել եմ-կարդացել էի, կարդալու եմ-կարդալու էի գուզադիր հակադրու-
թյուններով: Անկատար, վաղակատար և ապառնի՝ դերբայները այս հարացույ-
ցային ձևերից դուրս այլ կիրառություն չունեն. նրանք միշտ հանդես են գալիս
օժանդակ բայի հետ միասին և այդ գուզորդումից դուրս նրանք որպես անկախ
լեզվական միավոր փաստորեն գոյություն չունեն: Նույնն է նաև ժխտման դեր-
բայը, որ ևս անկախ ու ինքնուրույն բառային կիրառություն չունի, միշտ հան-
դես է գալիս օժանդակ բայի հետ՝ բաղադրելով պայմանական կամ ենթադրա-
կան եղանակի ապառնի և անցյալի ապառնի ժամանակները՝ չեմ կարդա, չէի
կարդա գուզադիր հակադրություններով:

Այստեղ ելնելով անկատար, վաղակատար, ապառնի և ժխտման դերբայ-
ների՝ լեզվի համակարգում ունեցած այդ յուրահատուկ դրությունից, մենք լեզ-
վաբանների ուշադրությունն ենք ուղղում հրավիրել բառաձև հասկացության
ըմբռնման և դրա ոլորտների սահմանագծման հարցի վրա: Ընդունված է, որ
բառաձևեր են համարվում բառի այնպիսի ձևերը, որոնք միավորված լինելով
նույն բառիմաստի տակ, իրարից չտարբերվելով նյութական նշանակությամբ,
տարբերվում են սոսկ քերականական-վերաբերական իմաստով, օրինակ՝
գիրք-գրքի-գրքից-գրքով- գրքում-գրքեր-գրքերի-գրքերից -գրքերով-գրքերում՝
նույն գիրք գոյականի տարբեր բառաձևերն են, կարդալ-կարդացած-կարդալիս-
կարդացի-կարդացիք, կարդաց.... կարդամ, կարդաս, կարդա. կկարդամ, կը-
կարդաս, կկարդա..., կարդա. կարդացեմ և այլն նույն կարդալ բայի տարբեր
բառաձևերն են: Բայց նույն կարդալ բայի համար որպես բառաձևեր ենք դնում
նաև անկատար՝ կարդում, ապառնի՝ կարդալու, վաղակատար՝ կարդացել և
ժխտման՝ կարդա ձևերը: Հարց է առաջանում՝ ճիշտ ենք վարվում մենք ար-
դյոք: Վերևում բերված և՛ անվանական, և՛ բայական բառաձևերը՝ գիրք-գրքի-
գրքից-գրքով-գրքում և այլն, կարդալ-կարդացած-կարդալիս-կարդացի-կարդա-
ցիք-կարդամ-կարդաս-կկարդամ-կկարդաս և այլն, բացի կարդում-կարդալու-
կարդացել-(չեմ) կարդա ձևերից, ավարտված-վերջավորված իմաստ են արտա-
հայտում, ունեն բառային անկախ ու ինքնուրույն գործածություն, որի շնորհիվ
էլ խոսքի մեջ հանդես են գալիս նախադասության ինքնուրույն անդամների
պաշտոններով: Բերված բառաձևերի այդ դերը այնքան ակնբախ է, որ օրի-
նակներ բերելու կարիք իսկ չի զգացվում: Այլ է, սակայն, կարդում-կարդալու-
կարդացել-(չեմ) կարդա ձևերի դրությունը: Դրանք ավարտված-վերջավոր-
ված իմաստ չեն արտահայտում, որի պատճառով էլ չունեն բառային անկախ
ու ինքնուրույն գործածություն և, հետևաբար, լեզվի կառուցվածքում ունեցած
իրենց դերով տարբերվում են վերևում բերված միավորներից: Բառաձևերը,
ինչպես վերևի օրինակներն են ցույց տալիս, ավարտված-վերջավորված իմաստ
են արտահայտում և ունենում են բառային անկախություն ու ինքնուրույնու-
թյուն: Եվ եթե կարդում-կարդալու-կարդացել-կարդա ձևերը ավարտված-վեր-
ջավորված իմաստ չեն արտահայտում և չունեն բառային անկախ գործածու-

թյուն, ասյա խիստ ասած՝ դրանք բառաձևեր էլ համարել չի կարելի: Կայսյալ դերբայները լեզվի ֆերականական կառուցվածքում իրենց խաղացած դերով մոտավորապես հավասարվում են բայահիմքերին, որոնց և համապատասխան վերջավորությունների բաղադրմամբ առաջանում են բայաձևերը: Այսպես՝ եթե բարձրան-հիմքից համապատասխան վերջավորությունների կցումով առաջա-նում են բարձրանալ-բարձրանալ-բարձրանաս-բարձրանա-բարձրանա՛մ-բարձ-րանա՛մ և այլ բայաձևերը, բարձրաց- հիմքից՝ բարձրացած, բարձրացող, բարձ-րացա-բարձրացար-բարձրացա՛վ... բարձրացի՛ր-բարձրացե՛ք բառաձևերը, ապա բարձրանում հիմքի և եմ օժանդակ բայի խոնարհված ձևերի միացմամբ առա-ջանում են բարձրանում եմ-բարձրանում ես-բարձրանում է... բարձրանում էի-բարձրանում էիր-բարձրանում էր բայաձևերը, բարձրացել հիմքից՝ բարձրացել եմ-բարձրացել ես... բարձրացել էի-բարձրացել էիր բայաձևերը, բարձրանա հիմքից՝ չեմ բարձրանա-չես բարձրանա..., չէի բարձրանա-չէիր բարձրանա... բայաձևերը: Սխալված չենք լինի, եթե ասենք, որ բարձրանում եմ-բարձրանում էի, ես եմ բարձրանում-ես էի բարձրանում, բարձրացել եմ-բարձրացել էի, ես եմ բարձրացել-ես էի բարձրացել և այլ բայաձևերի մեջ եմ-էի ձևույթները առաջին օրինակներում վերջահար, իսկ վերջին օրինակներում առաջահար մասնիկների դեր են կատարում՝ իրենց ֆունկցիայով շփման եզրեր հանդես բերելով բայական բուն վերջավորությունների հետ, օրինակ՝ գր-եմ, գր-ես, գր-ի, գր-եմք, գր-եք, գր-են, գրեց-ի, գրեց-իր, գրեց, գրեց-ինք, գրեց-իք. գրեց-ին⁹: Մենք վճռականորեն և անվերապահորեն չենք դնում հարցը, թե կարդում եմ-կարդում էի, կարդացել եմ-կարդացել էի և այլ բայաձևերի մեջ հանդես եկող, այսինքն կախյալ դերբայների մեջ հանդես եկող եմ և էի միավորները սոսկ վերջավորությունների դէր են կատարում, այլ ա-սում ենք, որ նրանք շփման եզրեր են հանդես բերում բայական բուն վերջավորությունների հետ, նկատի ունենալով այն, որ վերջիններս ձուլված են հիմքերին, նրանց հետ միասնություն են կազմում և ձևաբանական վերլուծության միջոցով միայն կարող են տարրալուծվել, իսկ առաջինները չեն ձուլվել հիմքերին, նրանց հետ սերտ ամբողջություն չեն կազմում, կարող են դրվել նաև ետադաս և անդամ ընդմիջվել այլ բառերով, օրինակ՝ Ես եմ ալսօր երեկոյան զնում նրանց տուն. Դու ես բուրրի ներկայությամբ նրան այգ քանն ասել և այլն: Եթե դրան գումարենք նաև այն, որ եմ, ես, է..., էի, էիր, էր և այլ ձևերը կարող են դրվել նաև գոյականների, ածականների ու այլ բառերի վրա և կադմել բաղադրյալ ստորոգյալ (ուսանող է, ուսանող էր, լավ է, լավ էր և այլն), այլև այն, որ դրանք կարող են ունենալ անկախ ու ինքնուրույն բառային դորժածություն՝ արտահայտելով նյութական իմաստ (նա եղել է, է՝ և կլինի), ապա պարզ կդառնա, որ հենց կարդում եմ-կարդում էի, կարդացել եմ-կարդացել էի տիպերի մեջ եմ և էի միավորների դերը չափազանց դժվարու-թյամբ կարող է սոսկ հավասարեցվել բայական բուն վերջավորությունների դերին: Բայց որ այդ տիպերի մեջ եմ և էի միավորները այս կամ այն չափով շփման եզրեր են հանդես բերում բայական բուն վերջավորությունների հետ— դրանում ևս չի կարելի կասկածել: Ինչպիսիք. ինչպես էլ որ մոտենանք այս հար-

9 Որքան մեզ հայտնի է, քննարկվող հարցի վրա հայ քերականագիտության մեջ առաջին անգամ հատուկ ուշադրություն է դարձրել պրոֆ. Ա. Ղարիբյանը (անս ռճայոց լեզվի դասավանդ-ման մեթոդիկա», Երևան, 1954, էջ 256)։

ՅԴ Հանդես, № 4

ցերի լուծմանը, թվում է, թե անառարկելի պետք է համարել այն, որ կարդում, կարդալու, կարդացել, կարդա ձևերը, որպես լեզվի կառուցվածքի միավորներ, չեն կարող դրվել, ասենք, գրել, գրած, գրող, գրելիս ձևերի մակարդակին (հասկանալի է, որ չեն կարող դրվել նաև գրեցի, գրեմ, կգրեմ, գրիւ և այլ ձևերի մակարդակին): Անկատար, ապառնի, վաղակատար և ժխտման դերբայները լեզվի կառուցվածքում իրենց խաղացած դերով մոտենում են կախյալ բայահիմքերի (այսինքն այնպիսի բայահիմքերի, որոնք անկախ բառային կիրառություն չունեն, օրինակ՝ բարձրաց-ա, մոտեց-ա, վախ-ա և այլն) խաղացած դերին, թեև առաջինները այս կամ այն չափով ինքնուրույնություն ունեն, իսկ վերջիններս լրիվ ղուրկ են ինքնուրույնությունից ու անկախությունից:

Այժմ անցնենք անկախ դերբայների բնութագրմանը: Արդեն նշված է, որ կախյալ դերբայները լեզվի կառուցվածքում համահնչյուն, համազոր առանձնահատկություններ են երևան հանում: Այս նույնը չի կարելի ասել անկախ դերբայների մասին: Վերջիններիս միակ ընդհանրությունը գործառական տեսակետից գուցե միայն այն է, որ նրանք հանդես են գալիս նախադասության ինքնուրույն անդամների պաշտոններով: Դրանից դուրս նրանք երևան են հանում էական տարբերություններ, քանի որ անկախ, ինքնուրույն կիրառություն ունեցող դերբայները նույն շարահյուսական առանձնահատկությունները չունեն: Անորոշ դերբայը սովորաբար հանդես է գալիս գոյականի, հարակատարը՝ ածականի, ենթակայականը և ապառնի II-ը՝ ածականի և գոյականի, իսկ անկատար II-ը՝ մակբայի շարահյուսական պաշտոններով: Բրենց իմաստով պայմանավորված՝ այս դերբայները տարբեր են նաև ձևաբանական առանձնահատկություններով: Անորոշ դերբայը հոլովվում է հենց ինքնին, որովհետև նա իր մեջ համատեղում է նաև գոյական անվան հատկանիշներ, օրինակ՝ հոգնել-հոգնելու-հոգնելուց, ֆնել-ֆնելու-ֆնելուց և այլն, ենթակայական դերբայը ևս հոլովվում է հենց ինքնին, որովհետև նրա մեջ գործողության հետ միասին դրսևորվում է նաև գործողի գաղափարը, ինչպես՝ կարդացող-կարդացողի-կարդացողից. հարակատար դերբայը հոլովվում է գոյականաբար գործածվելիս՝ որպես փոխանուն իր մեջ համատեղելով հատկանիշի և առարկայական նշանակություն, օրինակ՝ հոգնածը (հոգնած զինվորը, մարդը, ուսանողը)-հոգնածի-հոգնածից, ֆնածը-ֆնածի-ֆնածից. անկատար II-ը փոխանվանաբար գործածվել չի կարող, ուրեմն և ղուրկ է հոլովի կարգից, բացառությամբ այն հազվագյուտ դեպքերի, երբ գործածվում է ինքնանվանողաբար օրինակ՝ հոգնելիս-ը հոգնել բայի անկատար դերբայն է:

Այս թուուցիկ վերլուծություններն էլ բավական են համոզվելու, որ անկախ դերբայները տարասեռ, տարարնույթ քերականական առանձնահատկություններ են դրսևորում:

Հայերենի բոլոր դերբայական ձևերի համախմբումը մի քերականական կարգի տակ կարող է արդարացվել միայն նրանով, որ նրանք բայի անդամ ձևեր են, որոնց հատուկ են բայասևոի և դրանից բխող խնդրառություն քերականական կարգերը, իսկ իմաստային տեսակետից էլ հատուկ է գործողության, ընթացքի գաղափարը:

Մենք մի քանի անգամ կրկնեցինք, որ հայերենի դերբայներին, որպես բայաձևերի, հատուկ է գործողության, ընթացքի գաղափարը: Հայերենի դերբայների իսկական բնույթը ճիշտ բացահայտելու համար պետք է ավելի մանրամասնորեն վերլուծել այս վերջին կետը: Հայերենի տարբեր դերբայների հա-

մեմատությամբ անմիջաբար պարզ է դառնում, որ նրանք գործողության, ընթացքի գաղափարը նույն համասեռ ձևով չեն արտահայտում, դրսևորում կամ ներկայացնում: Այսպես, անկատար՝ կարդում, վաղակատար՝ կարդացել, ապառնի՝ կարդալու և ժխտման՝ կարդա դերբայների մեջ սոսկ կա գործողության, ընթացքի գաղափար. դրանից դուրս այլ նշանակություններ այս ձևերի մեջ չկան: Իսկ սա էլ իր հերթին նշանակում է, որ անկատար, վաղակատար, ապառնի և ժխտման դերբայները գործողությունը ներկայացնում են «մաքուր», «անխառն» վիճակում և այսքանով էլ հենց «անաղարտ» ձևով են ներկայացնում բայ խոսքի մասային կարգի քերականական էությունը: Այդ առանձնահատկությամբ է պայմանավորված նաև այն, որ դրանք լեզվի քերականական կառուցվածքում միանման դեր են կատարում՝ օժանդակ բայի հետ բաղադրելով եղանակային ձևեր: Ահա իրենց այդ առանձնահատկության շնորհիվ էլ վերոհիշյալ դերբայները կարող էին անջատվել մնացած բոլոր դերբայներից և համարվել առանձին քերականական կարգ: Եվ հարցի իսկական գիտական լուծումը հենց դա էլ կլիներ: Եվ եթե մենք սա չենք անում, ապա միայն այն պատճառով, որ մեղ համար ցանկալի չի խախտել ավանդականությունը և երկար ժամանակ բոլորի կողմից ընդունված և ամուր կերպով հայերենի քերականությունների մեջ մտած տերմինաբանությունը:

Ինչևիցե. ինչ որ ասվեց անկատար (ում), վաղակատար (ել), ապառնի (ու), ժխտման (ի, ա) դերբայների մասին, կարելի՞ է արդյոք ասել նաև մյուս դերբայների մասին: Կարելի՞ է ասել, թե անորոշ, ապառնի II, հարակատար, ենթակայական և անկատար II դերբայների մեջ ևս գործողությունը, ընթացքը արտահայտվում, դրսևորվում կամ ներկայացվում են «մաքուր», «անխառն» ձևով կամ վիճակում՝ առանց լրացուցիչ նշանակությունների: Ի՞նչ, չի կարելի ասել: Վերոհիշյալ դերբայների մեջ գործողության, ընթացքի հետ միաժամանակ (որը քերականական տեսակետից մենք դրանց մեջ պետք է գերիշխող համարենք, քանի որ նրանց բոլորին հատուկ են բայասեռի և դրանից բխող խնգրառության կարգերը, որոնք հենց գործողության, ընթացքի նշանակության, նյութական-քերականական դրսևորումներն են) առկա են կամ հանդես են գալիս նաև այլ խոսքի մասային նշանակություններ: Մանրամասնությունների մեջ չմտնելով՝ այս դերբայների և այլ խոսքի մասերի հարաբերակցությունները ներկայանում են հետևյալ ձևով:

Անորոշ դերբայը գործողության, ընթացքի հետ միաժամանակ դրսևորում է նաև առարկայական-գոյականական իմաստ, օրինակ՝ սիրում է վազել, խաղալ, կարդալ, զբոսնել, զվարճանալ, երգել, պարել և այլն:

Հարակատար դերբայը՝ հատկանշային-ածականական իմաստ, ինչպես՝ ֆնած երեխա, հոգնած դինվոր, հասած խնձոր, ջարդված ապակի, այրված թուղթ և այլն:

Ենթակայական դերբայը՝ ածականական և գոյականական իմաստ միաժամանակ, օրինակ՝ կարդացող աշակերտ, կարդացող (նա, ով կարդում է), մտածող մարդ, մտածող (նա, ով մտածում է), հաղթող ժողովուրդ, հաղթող (նա, ով հաղթում է), պայքարող մարտիկ, պայքարող (նա, ով պայքարում է) և այլն:

Ապառնի II-ը՝ ածականական և գոյականական իմաստ միաժամանակ, օրինակ՝ ասելիք խոսքեր, ասելիք (ասելու բան), գրելիք նամակ, գրելիք (գրե-

լու բան), անելիք գործ, անելիք (անելու բան), խմելիք գինի, խմելիք (խմելու բան) և այլն:

Անկատար II-ը՝ պարագայական-մակբայական իմաստ, օրինակ՝ Գրելիք (գրելու ժամանակ) տեսա, Տուն գնալիս հանդիպեցի, Կարդալիս մռայլվում էր, Հիշելիս տխրում էր, Վազելիս վայր ընկավ և այլն:

Դերբայների մասին ասվածները սխեմայով կամփոփվեն հետևյալ ձևով:

Դ ե ր ր ա յ ն ե ր	Գործողու- թյուն, ընթացք	Դոյականա- կան-առար- կայական իմաստ	Ածականական- հատկանշային իմաստ	Մականական- պարագայական իմաստ
Անորոշ (կարդալ)	+	+	—	—
Անկատար (կարդում)	+	—	—	—
Անկատար II (կարդալիս)	+	—	—	+
Ապառնի (կարդալու)	+	—	—	—
Ապառնի II (կարդալիք)	+	+	+	—
Վաղակատար (կարդացել)	+	—	+	—
Հարակատար (կարդացած)	+	—	+	—
Ենթակայական (կարդացող)	+	+	+	—
Ժխտման (կարդա)	+	—	—	—

Այսպիսով պարզ է դառնում, որ ժամանակակից հայերենի դերբայներից «մաբուր» բայական իմաստ են արտահայտում միայն անկատար (կարդում), վաղակատար (կարդացել), ապառնի (կարդալու) և ժխտման (կարդա) դերբայները, իսկ մյուս դերբայների մեջ բայական իմաստը զուգակցվում է այլ և այլ խոսքի մասային իմաստների հետ: Անորոշ դերբայի մեջ դրսևորվում է կամ համեմայն դեպս իրեն զգացնել է տալիս գայականի, հարակատար դերբայի մեջ՝ ածականի, ապառնի II և ենթակայական դերբայների մեջ՝ և՛ ածա- կանի, և՛ գոյականի, իսկ անկատար II-ի մեջ՝ մակբայի խոսքի մասային ի- մաստը: Ահա հենց այս երևույթն է պատճառը, որ միայն առաջին խմբի դերբայներն են մասնակցում բալի եղանակային ձևերի կազմությանը¹⁰. չէ՞ որ նրանց մեջ գործողությունը, ընթացքը դրսևորվում են «մաքուր», «անխառն» ձևով: Իսկ երկրորդ խմբի դերբայների մեջ դրսևորվում են նաև խոսքի մասա- չին այլ իմաստներ, որոնք աղարտում են «մաքուր» գործողության, ընթացքի գաղափարները հատկանշային ու առարկայական (նաև մակբայական) նշա- նակություններով: Դրանք այնպիսի նշանակություններ են, որոնք անհարիր են և հակասում են դիմավոր ձևերի իմաստային ամբողջ համակարգին, որի համար գուցե ամենահատկանշականն է «մաքուր» գործողության ներկայա- ցումը որպես ընթացք՝ միաժամանակ այն վերագրելով այս կամ այն դեմքին, ինչպես՝ կարդում եմ, կարդում ես, կարդում է, կարդացել եմ, կարդացել ես, կարդացել է, կարդացի, կարդացիր, կարդաց և այլն:

¹⁰ Հարակատար դերբայի հարցը վիճելի է: